ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի խոսքը՝ Գիրք նվիրելու օրվա առթիվ

19.02.2024

Սիրելի հայրենակիցներ,

Փետրվարի 19-ն արդեն մեր տոնացույցում դարձել է առանձնահատուկ ու նշանավոր օր գրողների, արվեստագետների, գրասեր հասարակության համար: Այն տոնվում է պետական մակարդակով՝ որպես Գրքի նվիրատվության օր, բոլոր գրադարաններում, կրթամշակութային հաստատություններում, պետական հիմնարկներում:
Գիրք նվիրելու օրը, որը ժամանակին սահմանվել է ՀՀ Գրողների միության առաջարկությամբ, համընկնում է Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվա հետ, ինչը կրկնակի է իմաստավորում այս տոնի խորհուրդը:
Այսօր մենք պատիվ ունենք տոնել Ամենայն հայոց բանաստեղծի 155-րդ տարեդարձը:
Թումանյանն իրեն հաջորդող սերունդներին ահռելի ժառանգություն է թողել, իր ստեղծագործություններով հեղաշրջում է կատարել հայ բազմադարյան գրականության մեջ: Նրա լեզուն և մտածողությունը պարզ են, ժողովրդական: Նա խորությամբ է արտացոլել հայ ժողովրդի հոգեբանությունը, մտքերն ու ձգտումները:
Թումանյանն իր քնարերգության մեջ արծարծել է հայրենասիրական, սոցիալական, քաղաքական, փիլիսոփայական, սիրային թեմաներ և մենք շարունակում ենք ազգովի մանկանալ ու մեծանալ նրա հետ, նաև հասունանում ու իմաստնանում ենք, բայց, ի վերջո, մեզ անհաս է մնում կատարելության այն սահմանը, որը գծել է բանաստեղծը:
Առհասարակ գիրքը հայ իրականության մեջ հազարամյակներ շարունակ եղել է ու կա որպես պաշտամունք, հոգևոր սնունդ, ազգային դեմք ու դիմագիծ:
Հենց հազարամյակների խորքից մեզ հետ խոսում են Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու ու այլոց հայրենաշունչ գրերը:
Այդ նույն գրքերը փոխանցվում են ձեռքից ձեռք, ընթերցվում, հանրայնացվում, դառնում ժողովրդի հոգևոր ժառանգության անբաժան մասը:
Շատ կարևոր է նաև, որ մեր ականավոր գրողների կողքին գրական ասպարեզ են մտնում նոր շնորհալի դեմքեր, որոնք շատ ամուր են բռնել մեր ազգային ու համամարդկային գրականության զարկերակը և իրենց ստեղծագործություններն են փոխանցում գալիք սերունդներին:
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս Գրքի նվիրատվության օրվա առթիվ, մաղթում խաղաղ հայրենիք, քաջառողջություն, ներդաշնակ ու արարչագործ զորությամբ բռնկված կյանք, գրական աշխարհի ներկայացուցիչներին՝ ստեղծագործական անսպառ եռանդ ու նոր գրքերի երկնում:
Լավագույն ցանկություններով ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան